ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԿԱԼԿԱԹԱՅԻ Ս. ՆԱԶԱՐԵԹ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵՐԱՐ ԽԱՉԻԿ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐՅԱՆԻ ՀՈԳՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Մայիսի 28-ին՝ Երկրորդ Ծաղկազարդին, Ս. Պատարագ մատուցվեց Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցում: Պատարագիչն էր հնդկահայոց հոգևոր հովիվ և հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Սրբազան արարողությունից հետո կատարվեց հոգեհանգիստ Ս. Նազարեթ եկեղեցու և Մարդասիրական ճեմարանի բարերար Խաչիկ Աստվածատուրյանի (Sir Catchick Paul Chater) մահվան 80-ամյակի կապակցությամբ:

Խ. Աստվածատուրյանը ծնվել է 1846 թ. սեպտեմբերի 8-ին Կալկաթայում և մկրտվել Ս. Նազարեթ հայկական եկեղեցում: Երիտասարդ տարիքում փոխադրվել է Հոնկոնգ, ուր և կնքել է իր մահկանացուն 1926 թ. մայիսի 27-ին: Շահութաբեր բիզնեսի և իր տաղանդի շնորհիվ դարձել է քաղաքի ամենանշանավոր մարդկանցից մեկը: Այսօր Հոնկոնգում նրա անվամբ են կոչվում կենտրոնական փողոցներից մեկը, մեկ զբոսայգի և այլ կարևոր վայրեր:

Հայր Սուրբը հոգեհանգստից հետո հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով մեծ բարերարի զարմանալի և արգասաբեր կյանքին ու գործունեությանը:

«Ուսանելի է մեծ բարերարի կյանքը հատկապես կալկաթահայության համար, քանզի նա երբեք, ոչ մի վայրկյան չմոռացավ իր անցյալը, իր հոգու ծննդավայր Ս. Նազարեթ եկեղեցին: Ուստի ամենքիս սրբազան պարտքն է՝ ամեն գնով վառ պահել հայության ոգին ու շունչը հնդկահայ գաղութում՝ դրանով իսկ հանգստություն պարգևելով նրա հոգուն»,- նշեց Հայր Օշականն իր խոսքում:

Հոգեհանգստին ներկա էին Կալկաթայի եկեղեցական վարչության անդամները, կալկաթահայեր և Մարդասիրական ճեմարանի սաները:

Արարողությունից հետո եկեղեցական վարչությունը օրվա կապակցությամբ կազմակերպել էր հյուրասիրություն:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ